Արձանագրություն N 4

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/24 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով էլեկտրոնային աճուրդով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի արտահերդ նիստի

ք. Երևան

26 հոկտեմբերի 2021 թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Անի Ղարիբջանյանը, անդամներ՝ Գոհար Հախինյանը, Ջուլիետա Բաբայանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ
ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/24 ծածկագրով գնման ընթացակարգի մասին

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/24 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Անի Ղարիբջանյանը նիստը հայտարարեց բացված և ներկայացրեց, որ ԷՄԳԱ ու Տոդոս-Ակա ՍՊԸ-ներին, որպես ընտրված մասնակիցներ, 11.10.2021թ-ին ներկայացվել էր պայմանագիր կնքելու առաջարկ: Տոդոս-Ակա ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման և պայմանագրերի ապահովումները, իր կողմից ցտորագրված պայմանագիրը ներբեռնել է համակարգ: ԷՄԳԱ ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման և պայմանագրերի ապահովումները, ինչպես նաև իր կողմից ցտորագրված պայմանագիրը չի ներբեռնել համակարգ:

Հրավերի 9.3 կետի համաձայն, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Իսկ 8.21 կետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում գնման ընթացակարգը հանձնաժողովի որոշմամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Հրավերի 8.15 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ: Ընդ որում, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը հանձնաժողովը որոշեց՝

- Ընթացակարգը՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

- Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 45-րդ կետի պահանջները՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնել «ԷՄԳԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Անի Ղարիբջանյան

անդամներ _____ Գոհար Հախինյան

_____ Ջուլիետա Բաբայան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան